

7897



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

« 17 » 07 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 128 - 24

Նախաձեռնող՝

«ՍԵԼԲԻ» ՍՊԸ

Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Մ. Ստեփանյան փ. , 2 14, բն. 24

Գործունեությունը՝

Սյունիքի մարզի Կարդի գրանտոդիրիպների  
հանքավայրի արդյունահանման աշխատանքներ

Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 128 - 24

«17» հուլիսի 2024թ.

Սյունիքի մարզի Կարդի գրանդիորիտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ՍԵԼԲԻ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Քաջարան համայնք, Նոր Աստղաբերդ բնակավայր

**Ներածական մաս.** Կարդի գրանդիորիտների հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Քաջարան խոշորացված համայնքի Նոր Աստղաբերդ բնակավայրի վարչական տարածքում՝ Գեղի բնակավայրից մոտ 4 կմ հյուսիս-արևմուտք, Գեղի գետից 45մ հեռավորության վրա:

Նոր Աստղաբերդ բնակավայրի Բակավանք հատվածի շինությունները հայցվող տարածքից գտնվում են 1.3 կմ, Գետիշեն բնակավայրի շինությունները՝ 0.9 կմ հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքը ներկայացված է Նոր Աստղաբերդ բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ արոտավայրերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ կառավարության օգտակար հանածոների պաշարների հանձնաժողովի 24.12.1993թ.-ի լիազումար նիստի №7 արձանագրությամբ ըստ B+C1 արդյունաբերական կարգերի համապատասխանաբար 666.1հազ.մ 3 և 1796.7հազ քանակներով:

Հանքավայրի տարածքում նախկինում խախտված և վերականգնված հողեր, հանված պահեստավորված, կուտակված հողաբուսական շերտ չկա:





Կարդի գրանդիրիտների հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող, կամ պատմամշակութային հուշարձանների տարածքի սահմաններում: Հանքավայրի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Ամենամոտ գտնվող հուշարձանը «Սևջուր» աղբյուրն է, որից հանքավայրի տարածքի հեռավորությունն ուղիղ գծով կազմում է 3.5 կմ:

Հայցվող տեղամասի ծայրակետային կոորդինատներն ըստ Arm WGS-84 համակարգի բերվում են ստորև.

1. Y=8596308.9073 X=4345181.3581,
2. Y=8596419.0000 X=4345279.0000,
3. Y=8596487.4928 X=4345212.4641,
4. Y=8596563.0000 X=4345145.0000,
5. Y=8596457.5319 X=4345050.9776,
6. Y=8596408.7153 X=4345049.8652,
7. Y=8596376.9975 X=4345060.2446,
8. Y=8596338.8823 X=4345110.4922:

Նախատեսվում է շահագործումն իրականացնել բաց լեռնային աշխատանքներով՝ առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

առավելագույն երկարությունը՝ 200 մ,  
առավելագույն լայնությունը՝ 185 մ,  
բացահանքի օտարման տարածքը՝ 3,35 հա,

Հաշվեկշռային պաշարների քանակը՝ 2346.02 հազ.մ<sup>3</sup>, որից  
B կարգ 666.1 հազ.մ<sup>3</sup>,  
C1 կարգ 1679.92 հազ.մ<sup>3</sup>

Արդյունահանվող պաշարների քանակը՝ 1835.41 հազ.մ<sup>3</sup>

Բացահանքի շահագործման ժամանակ օգտակար հանածոյի ընդհանուր բացահանքային կորուստները, պահպանիչ բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և ենթակա չեն մշակման: Բացահանքում դրանք կազմում են 510610 մ<sup>3</sup> կամ 21.76%:

Օգտակար հանածոյի տեղափոխման ժամանակ առաջացող շահագործական կորուստները ընդունվում են 0.1%:

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ օգտակար հանածոյի զանգվածի ընդունված է՝ 100000.0 մ<sup>3</sup> /տարի:

Աշխատանքային օրերի քանակը տարվա ընթացքում ընդունված է 260 օր, աշխատանքային հերթափոխերի քանակը մեկ օրվա ընթացքում 2 անգամ, հերթափոխի տևողությունը 8 ժամ:

Բացահանքի բնականոն շահագործման համար նախատեսվում է բացահանքի հարավ-արևելյան մասից՝ դեպի Կարդ գնացող ճանապարհից մինչև բացահանքի 1890 մ նիշ ունեցող հորիզոն՝ թեք կապիտալ խրամի անցում (L=1713մ, b= 7 մ, V = 39400 մ<sup>3</sup>):

1890 մ նիշ ունեցող հորիզոնից նախատեսվում է ապարների հեռացում 10300 մ<sup>3</sup> ծավալով, այդ թվում՝ 3400 մ<sup>3</sup> մակաբացման ապարներ և 6900 մ<sup>3</sup> օգտակար հանածոյի զանգված:

1885 մ նիշ ունեցող հորիզոնից ապարների հեռացում 2250 մ<sup>3</sup> ծավալով, այդ թվում՝ 450 մ<sup>3</sup> մակաբացման ապարներ և 1800 մ<sup>3</sup> օգտակար հանածոյի զանգված:

Նախատեսվում է կառուցել արդյունաբերական հրապարակ 1200 մ<sup>2</sup> տարածքում:





Ելնելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից բացահանքի հանքաստիճանների շահագործումը նախատեսվում է կատարել միակողմանի, խորացող, ընդերկայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով:

Մակաբացման ապարները բացահանքի սահմաններում 82170 մ<sup>3</sup> ծավալով ներկայացված են խճավազով և խիստ ճաքճքված գրանոդիորիտներով (փուշտա), որոնք համաձայն երկրաբանական հաշվետվության կարող են օգտագործվել խճի արտադրության համար: Մակաբացման ապարների հեռացումը կատարվում է քսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով՝ առանց նախնական փխրեցման: Դրանք կուտակվում են արտադրական հրապարակում, որտեղից պայմանագրային հիմունքներով իրացվում են սպառողներին՝ որպես շինարարական խճի հումք:

Միաքարի տեղափոխումը հանքախորշից դեպի մասնատման վայր նախատեսվում է կատարել բուլդոզերի օգնությամբ: Միաքարի մասնատումը բլոկների կատարվում է հորատասեպային եղանակով: Բլոկների կոպտամշակումը նախատեսվում է կատարել հիդրավլիկ մուրճի միջոցով: Ստացված բլոկները տրանսպորտի մեջ բարձելու համար օգտագործվում է ավտոմոբիլային կռունկ: Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած թափոնները 130.75 մ<sup>3</sup>/հերթ ծավալով բուլդոզերով տեղափոխվում են միջև 15-20 մ, կուտակվում աշխատանքային հրապարակում, այնուհետև 2.3 մ<sup>3</sup> շերտի տարողությամբ էքսկավատորով բարձվում են ավտոինքնաթափերն ու տեղափոխվում միջինը 1.0 կմ հեռավորության վրա գտնվող արտադրական հրապարակ, որտեղից սպառողների տրանսպորտային միջոցներով իրականացվում է թափոնների, ինչպես նաև բլոկների տեղափոխումը:

Մակաբացման ապարներ 4500 մ<sup>3</sup>/հերթ և արտադրական թափոնները 6800մ<sup>3</sup> /հերթ ծավալներով ավտոինքնաթափերի մեջ բարձման համար ընդունվում է 2.3 մ<sup>3</sup> շերտի տարողությամբ, հակառակ բաժով սարքավորված էքսկավատորը:

Բացահանքի պայմաններում բուլդոզերային աշխատանքներ են հանդիսանում մակաբացման ապարների թափոնների տեղափոխումն ու կուտակումը, միաքարի հեռացումը հանքախորշից: Դրանց տարեկան ծավալները համապատասխանաբար կազմում են 4500 մ<sup>3</sup>, 32000 մ<sup>3</sup>, 68000 մ<sup>3</sup>: Բացահանքի շահագործման ընթացքում լցակույտ առաջացնող ապարներ չեն գոյանում, քանի որ մակաբացման ապարները և թափոնները հանդիսանում են խճի արտադրության հումք:

Նախատեսվում է բացահանքի շահագործումը կատարել 5 մ բարձրությամբ հանքաստիճաններով՝ վերևից ներքև հաջորդաբար: Նոր հանքաստիճանի բացումն ու շահագործումը կատարվում է վերևի հանքաստիճանի պաշարները մարելուց հետո:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է բացահանքի բանվորներին խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակ, ավտոճանապարհ, բացահանք) ջրման նպատակով: Խմելու ջուրը բերվելու է կցովի ցիստեռնով:

Փոշենստեցման նպատակով տեխնիկական ջուրը բերվելու է ջրցան-վացող ավտոմեքենայով: Կենցաղային կեղտաջրերը՝ հերթափոխում 0.232 մ<sup>3</sup> ծավալով, լցվում են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվում են մոտակա մաքրման կայան:

Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո ռեկուլտիվացիայի են ենթարկվելու բացահանքի հատակը ողջ մակերեսով՝ 1.5հա և արդյունաբերական հրապարակը՝ 0,12հա, ընդհանուր՝ 1.62հա: Հարթեցումը կկատարվի բուլդոզերի օգնությամբ:

Իրականացվելու է նաև լեռնատեխնիկական եղանակով վերականգնված տարածքների կենսաբանական ռեկուլտիվացիա: Այս նպատակով արդյունաբերական հրապարակի





բացահանքի հարթեցված տարածքում փովելու է հայկական արտադրության կենսապարարտանյութով հագեցված հողագրունտի զանգված և կատարվելու է չորասեր բազմամյա խոտաբույսերի (խնկճաղկի, ուրցադաղձ, սովորական օշինդր, մարիամ խոտ) սերմերի ցանք: Ռեկուլտիվացիայի կենսաբանական փուլի իրականացման նպատակով նախատեսվում է տրամադրել 162.16 հազ. դրամ: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի 1390.2 հազ. ՀՀ դրամ:


Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել: Հանքավայրի տարածքում չկա նաև անտառային բուսականություն:

Նախատեսվող գործունեության տարածքում անտառներ առկա չեն: Հանքավայրի տարածքը անտառապատ/ծառապատ չէ:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- Նավթամթերքները պահեստավորվելու և պահվելու են արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ) և ապահովվելու է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:
- Հանքաստիճանի հատակին տրվելու է 1° թեքություն՝ ռելիեֆից դեպի հանքաստիճանի հատակի եզրագիծ, ինչի շնորհիվ կբացառվի ջրերի արտահոսքը դեպի ռելիեֆ և կուղղորդվի այն բացահանքի աշխատանքային հրապարակի ռելիեֆի հակառակ կողմը, որտեղ էլ ճաքերի միջոցով կներծծվի խորքային հատվածը, կենթարկվի բնական ֆիլտրացիայի:
- Կուտակված թափոնները պարբերաբար տեղափոխվելու են վերամշակում իրականացնող կազմակերպությունների տարածք:
- Կենցաղային աղբը հավաքվելու է հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվելու է մոտակա կազմակերպված աղբավայր, համապատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:
- Փոշենստեցման նպատակով իրականացվելու է հանքավայրին մոտեցնող ճանապարհի, բացահանքի և արդյունաբերական հրապարակի ջրում՝ տարվա չոր և շոգ եղանակներին:
- Արդյունահանման աշխատանքները կատարվելու են միայն ցերեկային ժամերին:
- Իրականացվելու է արտադրական տարածքի կանաչապատում՝ չորասեր, տարածքի լանդշաֆտին բնորոշ թփերով:
- Կենսաբազմազանության պահպանության նպատակով Կարդի հանքավայրի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմն անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ:
- Հանքավայրի տարածքի պարագծով տեղադրվելու են նախազգուշացնող նշաններ, ինչը թույլ կտա կանխել անվտանգության տեխնիկայի հրահանգավորում չանցած մարդկանց մուտքը հայցվող տարածք:
- Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ,





-Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արտադրական հանքավայրի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

-Աղմուկի վերահսկողություն՝ տարեկան մեկ անգամ չափումների միջոցով:

-Կենսաբազմազանության ուսումնասիրություն՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխության մշտադիտարկումներ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով, Սյունիքի մարզի Կարդի գրանդիորիտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Սյունիքի մարզպետարանը: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

-Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

-Անհրաժեշտ է մինչև հանքարդյունահանման աշխատանքների սկսելը շրջակա միջավայրի նախարարությունից ստանալ ջրօգտագործման թույլտվություն:

- Բացահանքի շահագործման ընթացքում ներգրավել համայնքի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել համայնքային բյուջե ֆինանսական ներդրումներն ու անհրաժեշտ սոցիալական ծրագրերը:

-Անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և





դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

-Արդյունահանվող տարածքներից հողային շերտի հեռացումը և դրա պահպանումը բացահանքի տարածքից անհրաժեշտ է կատարել՝ ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի №1396-Ն և Կառավարության 2017թ-ի նոյեմբերի 2-ի թիվ 1404-ն որոշումների պահանջներին համապատասխան:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՍԵԼԲԻ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Սյունիքի մարզի Կարդի գրանողիորիտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Էրիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան